Կ. ՊՈԼՍԻ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոյեմբերի 6-ին, Պատրիարքարանը Տեղապահի ստորագրությամբ պաշտոնական մի զեկույց հրատարակեց «Ժամանակ»-ի մեջ, Թրքահայ պատվիրակության էջմիածին առաքելության մասին։ Այդ առթիվ «Նոր լուր»-ը հետևյալն է գրում. Այդ զեկույցը շեշտելե վերջ թե հանրապետական կառավարության բարեհաճ թույլտվությամբ էջմիածին մեկնած այդ պատգամավորությունը իր «մասնակցությունը բերած էր Եկեղեցական Համագումարին և Վեհափառ Հայրապետի ընտրության ու օծման հանդիսությանց» կհայտներ թե «որովհետև պատգամավորության վերադարձեն հետո, այլ ընդ այլոց հրատարակություններ և թղթակցություններ երևցած էին մամուլին մեջ և կարգ մը անհիմն վերագրումներ շրջած էին այդ առաքելության շուրջ, պետք կզգար պաշտոնապես հայտարարելու թե

1) «Թրքահայ ներկայացուցիչները մասնակցած էին վերջին երկու նիստերուն, որոնցմե մին զբաղած էր էջմիածնի կաթողիկոսության պյուտճեով և մյուսը Գերագույն Հոգևոր Խորհրդի ընտրությամբ և կրոնական բնույթ ունեցող այդ խորհրդակցությանց ներկա գտնված էին իբր Թրքահայ պատգամավոր և

2) Թրքահայ պատգամավորությունը Երևանի և էջմիածնի մեջ իր տասնօրյա բնակության ընթացքին պաշտոնական և կամ անպաշտոն ոչ մեկ անձնավորության հետ ոչ մեկ քաղաքական տեսակցություն, խորհրդակցություն, շփում և կամ հարաբերություն չէ ունեցած և իբր թուրք հայրենակից Կրոնական Համագումարին մեջ պատգամավորական պարտականությունը կատարելով վերադարձած է»։

Ուշագրավ զանցառություն մը, որ խիստ նշանակալից է սակայն, Ազգային Պատրիարքարանը, ինչպես միշտ, այս անգամ ալ պաշտոնական այդ զեկույցը չէր հղած «Մարմարա»-ին, ավելորդ է ըսել, զայն հայաթերթ չնկատելուն համար և պատճառաբանելով որոնք ծանոթ են ամբողջ հայության։

Բայց այս գործին մեջ ամենեն ցավալին այն է, որ դժբախտաբար մեր ժողովուրդին մեջ կան մարդիկ, հոգ չէ թե սակավաթիվ, որ բարոյապես կամ նյութապես կսնուցանեն վասակներն ու օձերը, առանց խորհելու պահ մը թե՝ այս վերջինները ամբողջ Թրքահայության ճակատագրին հետ է, որ կխաղան, ավելի բաց խոսելու համար 150—200.000 հայության, որովհետև Թրքահայոց ներկայացուցիչներուն՝ եկեղեցական կամ աշխարհական, քաղաքական դեր վերագրել, ուղղակի կոնակեն զարնել է ամբողջ Թրքահայությունը։

Այդ առթիվ պատգամավորության մասնակցող պ. Թ. Ա. հետևյալ նամակն է հրատարակության տվել «Շառաչուն ապտակ» վերնագրով։

Տեղապահ Ս. Հոր պաշտոնական զեկույցը՝ որ լույս տեսավ 2 օր առաջ «Ժամանակ»-ի մեջ, շառաչուն ապտակ մըն է զարնված երեսին՝ արհեստով քսու և վասակատիպ ու նողկալի այն արարածներուն, որոնք ոչ միայն միջոցի մեջ խտրություն չը դրին վարկաբեկելու էջմիածին ուղևորվող Թրքահայ պատգամավորությունը, այլ ինքնահնար սուտերով ու դավերով ջանացին կասկածելի ցույց տալ անոր առաքելությունը հաշվ կառավարության։ Այդ դավադրության հեղինակները անշուշտ պիտի կրեն իրենց արժանի պատիժը։

Գալով կաթողիկոսական ընտրության առթիվ վերստին հավելված և ընծայված անհամ մեղեդիին, ծիծաղ միայն կշարժե, քանի որ տասն անգամ գրվեցավ, ու հայտարարվեցավ, թե ընտրության օրն հասանք էջմիածին և ներկա համարվելով՝ հաջորդ նիստին ստորագրեցինք ընտրության տեղեկագիրը», որ վավերացումն էր մեր մասնակցության։

«Ն. Լ.»

(«Ալիֆ» դեկտ. 6 1946 թ.)